ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 3/1

«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՄՈԱԿ-ԻՆ «ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ (ԾՐԱԳՐԻ ԴԱՍԻՉԸ՝ 1110, ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԴԱՍԻՉԸ՝ 12001) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան «18» նոյեմբերի 2022թ.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս Գլխավոր քարտուղար Լ. Միրզախանյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ռուս-Հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն» միջկառավարական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Պ.Գյոզալյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ ՝ Կողմեր), համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1556 - Ն որոշման Հավելված N 6-ի, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է «Ռուս-Հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն» ՄՈԱԿ-ում այլընտրանքային աշխատանքային ծառայության անցած ՀՀ երկու քաղաքացիներին՝ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրամական բավարարման և փոխհատուցման վճարման համար, Կազմակերպությանը տրամադրել ընթացիկ դրամաշնորհ, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է «Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրում» ծրագրի համաձայն, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում կատարել վճարումներ՝ երկու այլընտրանքային աշխատանքային ծառայողներին:

2.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1.Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել ներկայացնել հաշվետվություն սույն Պայմանագրի շրջանակներում իրականացված աշխատանքների վերաբերյալ՝ ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված ձևով,

2.1.2. Կազմակերպությունից ըստ անհրաժեշտության պահանջել և ստանալ տեղեկատվություն սույն Պայմանագրով սահմանված աշխատանքների ընթացքի մասին,

2.1.3. Իր իրավասությունների սահմաններում կասեցնել, Կազմակերպության կողմից ոչ պատշաճ ձևով կամ կարգով, սույն Պայմանագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների ընթացքը,

2.1.4. Վերահսկել Կազմակերպությանը սույն պայմանագրի շրջանակներում հատկացված ընթացիկ դրամաշնորհի նպատակային օգտագործումը,

2.1.5. Կազմակերպությունից պահանջել աշխատանքները կատարել սույն Պայմանագրի 4-րդ կետում նշված ժամկետում:

2.2 Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1. Սույն Պայմանագրի պահանջներին համապատասխան Կազմակերպությունը տրամադրել ընթացիկ դրամաշնորհը՝ սահմանված կարգով և չափով,

2.2.2. Անհրաժեշտության դեպքում, Նախարարության և Կազմակերպության կանոնադրություններով սահմանված կարգով, ձևով ու չափերով Կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն:

2.3 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրի շրջանակներում ստացված ֆինանսական միջոցներն օգտագործել միայն Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարման և դրամական փոխհատուցման տրամադրման համար,

2.3.2. Իր ուժերով և իր հաշվին վերացնել Աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով թույլ տված այն թերությունները, որոնք կարող են հանգեցնել Ծրագրով նախատեսված միջոցառումներից շեղումների,

2.3.3. Նախարարությանն անհապաղ տեղեկացնել Ծրագրից սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքները շարունակելու աննպատակահարմարության մասին,

2.3.4. ՀՀ օրենսդրությամբ և իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով Նախարարության պահանջով ներկայացնել հաշվետվություններ և տեղեկատվություն՝ Պայմանագրի կատարման ընթացքի մասին:

3. Ընթացիկ դրամաշնորհի չափը և վճարման կարգը

3.1 Ֆինանսավորման չափն, ըստ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, 2022թ. 5 ամիսների համար, կազմում է 300.000 ՀՀ դրամ (յուրաքանչյուրի համար ամսական 30.000դր.):

3.2. Կազմակերպության կողմից այլընտրանքային աշխատանքային ծառայողիներին վճարումներն իրականացվում են հաշվետու տարվա օգոստոս-դեկտեմբեր ամիսների համար՝ հետվճարային ձևով, ընթացիկ ամսվան հաջորդող առաջին հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, տարածվում է 2022թ. օգոստոսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, գործում է մինչև 2022թ դեկտեմբերի 31-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կողմերը Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Վեճերի լուծման կարգը

6.1. Պայմագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Այլ պայմանները

7.1. Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ գործողության դադարեցումն իրականացվում է Կողմերի գրավոր համաձայնությամբ:

7.2. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը՝

Պատվիրատու	Կատարող
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն Ք.Երևան Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան փող. 109/8 ՀՎՀՀ 00153247 h/h	«Ռուս-Հայկական մարդասիրական Արձագանքման կենտրոն» ՄՈԱԿ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Գետարգել ՀՎՀՀ 03542119 «ՀայէկոնոմԲանկ» ՓԲԸ h/h 2479000115260000 դրամային
Գլխավոր քարտուղար՝ _____ Լ. Միրզախանյա	Տնօրեն _____ Պ. Գյոզալյա
Կ.Տ	Կ.Տ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԱՐՆ գլխավոր քարտուղար
_____Լ. Միրզախանյան
«___» նոյեմբեր 2022թ.

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն

ԾՐԱԳՐԻ ԴԱՍԻՉԸ՝ 1110, ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԴԱՍԻՉԸ՝ 12001

		I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	տարի
	Ընդամենը եկամուտներ	0.0	0.0	0.0	300.0
	այդ թվում				
	2022թ. ՀՀ Պետական բյուջեից նախատեսված հատկացումներ	0.0	0.0	0.0	300
	Ընդամենը ծախսեր	0.0	0.0	0.0	300.0
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	0.0	0.0	0.0	300.0

ՄՈԱԿ-ի Տնօրեն՝ **Պ. Գյոզալյան**